Փունջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մէճիտ կանիկի վճարելի, թէ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց եւ թէ գաւառաց համար։

Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

Տեղական եւ գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

Հատը 40 փարայ է, եւ կգտնուի մասնաւորապէս Պանճէ-Գափու ջրավանառ եւ գրավանառ Պօղոս աղայի խանութը։



Ծանուցման տողը 3 դրուշ է մէկ անգամի համար. Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալատճատեան Կ. Պոլիս Պալըգ-բազար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ. 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Armenien Pountch
—16 Nafié-Han . Balouk-Pazar 16—
Constantinople

Թիւ 1940 — ՇԱԲԱԹ — 1885 ՄԱՅԻՍ 4

ԱԶԳԱՅԻՆ

Կաթոլիկ Ցանցնաժողովի մը կազմուեցաւ երկու տարի յառաջ՝ առաջնորդական սահմանաց ուղղութեան համար, և ապա այդ յանձնաժողովին պաշտօն տրուեցաւ՝ առաջնորդաց նիւթական վիճակին բարւոքման միջոցներն ալ խորհիլ և տեղեկագրել։ Ազգային Վարչութեան Խառն ժողովին յայնժամ հարկադրեցաւ կազմել յանձնաժողովին և փափաք յայտնել, որ անյապաղ տրուի տեղեկագիրը. վասն զի համոզուեցաւ որ առաջնորդական սահմանաց խառնաշփոթ վիճակը վնասակար է գաւառական ազգայնոց, և տեսաւ որ առաջնորդաց ոմանք կը գանգատին թէ չեն կրնար ունենալ իրենց պիտոյից բաւական հասոյթ։

Ցանցնաժողովոյն կազմութենէն յառաջ և յետոյ յաճախ դրած լինելով յիշեալ երկու կարևորագոյն խնդրոց վրայ, բոլորովին աւելորդ կը համարիմք՝ վերստին յեղյեղել մեր գրածներն. այլ ցաւ յայտնելով յանձնաժողովոյ տեղեկագրոյն մինչև ցարդ յապաղման, և հետևաբար կարևորագոյն բարեկարգութեանց բարձի թողի մնալուն համար, կառաջարկեմք Ցանցնաժողովոյ պատուարժան անդամոց, որ հաճին ո՛չ ևս յապաղել և տեղեկագիրը մատուցանել Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ իւր խնամոց և հոգածութեան դլխաւոր առարկայ ըրած է ազգային ներքին բարեկարգութեանց գործն, և մասնաւորապէս մեծ փափաք ու եռանդն ունի գաւառական ազգայնոց վրայ գործունեայ և արժանաւոր հովիւներ տեսնելու համար։

Գաւառական Այցելութեան խնդիրն ևս այս առթիւ Նորին բարձր Սրբազնութեան ուշադրութեան կը մատուցանեմք. խնդի՛ր մը՝ որոյ վրայ բազումանգամ խօսուած է, և որ մինչև իսկ Ազգային ժողովոյ ատեանն ելնելով՝ կարևոր համարուած և յանձնարարութիւններ եղած են ազգային Վարչութեան։ Մեծապէս օգտակար կը լինի ժողովրդեան, եթէ քանի մը անձնուէր և անշահադէտ եկեղեցականք գաւառները շրջագային, առաջնորդական պաշտօնավարութեան ընթացքն ու ժողովրդեան վիճակը քննեն, բարեկարգութեան ու ուղղութեան միջոցներն հետաքննեն և տեղեկագրեն։ Ահաւասիկ այսպիսի այցելութեան անհրաժեշտ պէտք ունի Նիկոմիդիոյ ընդարձակ վիճակն. արդի Առաջնորդին համար բազում ժամանակէ հետէ կը լսուի թէ ընդարձակ վիճակ մը հովուելու անկարող է, և վիճակին բոլոր ժողովուրդը լքեալ և ողորմելի կացութեան մը մէջ կը դըտնուի։ Այցելութեամբ ու քննութեամբ և եթ կարելի է վերահասու լինիլ, թէ Առաջնորդը կարո՞ղ է հովուել Նիկոմիդիոյ բազմահայ և ցանուցիր վիճակը, թէ՝ ստո՞յգ են դանդատներն, և թէ՝ ո՛ր աստիճան կարևորութիւն ընծայել արժան է ջատագովութեան ու ամբաստանութեան թղթոց, որ վերջին ժամանակներս դարձեալ կը տեղան ի Պատրիարքարան։

Ամեն. Ս. Պատրիարք Հօր օրհնութեան առաջին կոնդակն այս շաբթու ղրկուեցաւ առ առաջնորդս գաւառաց և առ քարոզիչս եկեղեցեաց մայրաքաղաքիս։ Նորին բարձր Սրբազնութիւնն պատրիարքական գահակալութիւնը ծանուցանելէն յետոյ՝ յորդոր կը կարդայ ամէն կարգի և աստիճանի Հայոց՝ ջանալ ի գործադրութիւն իւրեանց պարտուց առ Եկեղեցին և առ Ազգն, և միասիրտ ու միահոգի գործակցիլ ի փառս Հայաստանեայց Եկեղեցւոյ և ի յառաջադիմութիւն և ի պատիւ Ազգին։ Ս. Պատրիարք Հայրը շրջաբերական մ'ալ ուղղած է առ Թաղական խորհուրդս, որով միանգամայն կը պատուիրէ խնամ տանիլ ազգային մանկտւոյն դաստիարակութեան համար, և հսկել եկեղեցական կալուածոց բարւոք մատակարարութեան։

— Բաղդաւոր է Տիգրանեան Հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոս։ Ցայտնի է, թէ Տիարպէքիր կը գտնուի, և չերթար Մակաբայեցւոց վանքն, որոյ վերատեսուչ անուանեալ է, և որոյ թեմն եղող գիւղօրէից քրդախօս Հայոց հովուութեան ու կրթութեան պաշտօնն ալ ստանձնած է։ Այժմ կը լսուի, թէ Տիարպէքիրէն ի Պատրիարքարան հասած է հեռագիր մը՝ 1500 ի տուն քաղդէացի ասորւոց ստորագրութեամբ, որ կը ծանուցանեն եղեր թէ պատրաստ են դիմել ի գիրկ Հայաստանեայց եկեղեցւոյ, եթէ Տիարպէքիրի առաջնորդ ընտրուի Հրաշագործն Տիգրանեան։

— Քանիցս հրատարակած եմք, թէ Կիւրին գտնուող Տ. Ղեւոնդ եպիսկոպոս Շիշմանեան՝ ի Պոլիս կը կոչուի Պատրիարքարանէն, սակայն տեղւոյն ազգային ժողովները կը խնդրեն որ մնայ ի Կիւրին և ժողովուրդը չլքանի անխնամ։ Արդ՝ զարմանօք կը լսեմք, թէ Կիւրիւնի Թաղական խորհուրդն այս օրերս դանգատեր է առ Պատրիարքարան, թէ Տ. Ղեւոնդ եպիսկոպոս հրաժարեցուցած է Քաղաքական նորընտիր ժողովոյ եւ Թաղական խորհրդոյ ա՛յն անդամներն, որ իրեն համակարծիք չեն, և Թաղական խորհրդոյ անդամներէն մին իբրեւ օտար հպատակ կասկածելի ըրած է առաջի տեղական կառավարութեան, և թէ՝ ժողովրդեան յուզման ու պառակտման պատճառ եղած է, և անհրաժեշտ հարկ է հեռացընել զնա Կիւրինէն, որպէս զի աւելի ծանր չլինի հետեւանքը։ Մեր գաւառական ազգայինք յաճախ այսպիսի ընթացիւք դժուարութիւն կը պատճառեն Պատրիարքարանի։ Կիւրինցիք՝ որ տակաւին քանի մը շաբաթ յառաջ կը պաշտէին կը պաշտպանէին զՏ. Ղեւոնդ եպիսկոպոս, այժմ մինչեւ ի դժոխս կիջուցանեն։ Այսպէս մեծաւ զարմանօք տեսնուեցաւ, որ Նիկոմիդիոյ պաշտօնաւոր ազգայնոց ոմանք, եկեղեցական և աշխարհական, որ Նիկոմիդիոյ առաջնորդին վրայ դանգատներ գրած էին ի Պատրիարքարան, ապա ջատագովութեան թղթոց ներքեւ տեսնըուեցան նոցա անուանքն ալ։ Ըստ մեզ, Պատրիարքարանի պարտ է ուղղակի քննութիւն բանալ այսպիսի վիճակաց համար։ Անցնելով Տ. Ղեւոնդ եպիսկոպոսի խընդրոյն, կարծեմք թէ Պատրիարքարանը կարեւորութիւն չտալով Կիւրինէն նորա համար գրուած ո՛չ դանգատանաց և ո՛չ ջատագովութեանց, պիտի գործադրէ իւր որոշումն՝ կոչելով զնա ի Պոլիս, և գրելով առ Կիւրինցիս թէ արդէն Կիւրինի համար ո՛ր և է պաշտօն յանձնուած չէր նմա, և թէ Կիւրինցիք ինքնին ընկալան զնա ցարդ։

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ որ ըստ գրոյն Բ. Դրան երեքշաբթի պիտի ներկայանայր Օգոստ. Սուլթանին, այսօր պիտի ներկայանայ կայսերական հրամանաւ, որ երկուշաբթի երեկոյ հաղորդուեցաւ Նորին Սրբազնութեան։ Պատրիարքարանի մէջ յատկապէս յանձնաժողով մը կազմուած է՝ այս աւուր հանդիսին բարեկարգութեան հսկելու պաշտօնով։ Կայսերական պալատէն երեք հանդիսական կառք և եօթն երիվարք պիտի ղրկուին Պատրիարքարան. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը թէշրիֆաթճի պէյին հետ պիտի բազմի առաջին կառքին մէջ. երկրորդին մէջ՝ Կրօնական ժողովոյ անդամ երկու եպիսկոպոսունք, երրորդին մէջ՝ Քաղաքական ժողովոյ ատենապետ Վսեմ. Սիմոն պէյ, Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան էֆէնտիի հետ. ձիաւոր չորս վարդապետք պիտի հետեւին կառքին։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, պալատէն ելնելէն յետոյ, դարձեալ պալատական կառօք Բ. Դուռը պիտի երթայ՝ Սիրքէճիէն անցնելով, ուր պալատան ուրիշ հինգ կառքեր և Պատրիարքարանէն կառքեր պիտի աւելնան և ընկերանան Կրօնական և Քաղաքական ժողովոյ անդամք, երեսփոխանք, Պատրիարքական Դեր. Փոխանորդն, և այլք, և ձիաւոր վարդապետաց մին ի ձեռին պիտի ունենայ, պատրիարքական մականը (Ասա)։ Ս. Պատրիարք Հայրը Բարձր. Մեծ եպարքոսին և այլ բարձրաստիճան նախարարաց այցելելէն յետոյ, դարձեալ նոյն հանդիսիւ պիտի վերադառնայ ի Պատրիարքարան, Գատրկայի ճանապարհաւ։ Այր եկեղեցւոյ մտերը քահանայք և դրպիրք դգեստաւորեալ և եկեղեցական երգով ընդառաջ պիտի ելնեն Նորին Սրբազնութեան, որ եկեղեցի մտնելով պիտի բարեմաղթէ Օգոստ. Սուլթանի, նախարարութեան և Հայ Ազգին համար։

— Մանուցինք նախորդ թերթով, թէ Ս. Էջմիածնէն կաթողիկոսական ընտրութեան արդիւնքն ի Պատրիարքարան հեռագրուելէն յետոյ՝ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը փութացաւ Կրօնական ու Քաղաքական ժողովոյ կողմանէ շնորհաւորական հեռագրեր ուղղել առ Ամեն. Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոսն։ Արդ՝ կը յաւելումք ծանուցանել, թէ շնորհաւորական հեռագրեր ու նամակներ ղրկուեր են նաև Ս. Էջմիածնի Սինհոդէն, Միաբաններէն, կաթողիկոսական ընտրողներէ, Ռուսիոյ և Թուրքիոյ այլ և այլ կողմանց պաշտօնաւոր և անպաշտօն բազմաթիւ եկեղեցականներէ ու աշխարհականներէ, և ի Մանիսա՝ ուր կը գտնուէր Ամեն. Տ. Մելքիսեդեկ Սրբազան, ամէն կարգի ազգայինք փութացեր են ի շնորհաւորութիւն, և շքեղ հացկերոյթ մը տրուեր է. և երբ Իզմիր վերադարձեր է Մանիսայէն, բազմութիւն ազգայնոց և օտարազգեաց սկսեր են այցելել։

— Հայոց Միացեալ ընկերութեանց կեդրոնական ժողովոյ դերնախագահ Մկրտիչ էֆէնտի Մանուկեան և Տնօրէն ժողովոյ անդամք երկուշաբթի Ամեն. Ս. Պատրիարք Հօր ներկայացան ի շնորհաւորութիւն։ Դերնախագահն, ի դիմաց ընկերութեան արտասանեց ուղերձ մը, յորում յայս կը յայտնէր թէ Նորին բարձր Սրբազնութիւնն անշուշտ չպիտի ըղձանայ իւր աջակցութիւնն ու պաշտպանութիւնն յօգուտ Ընկերութեան։ Ս. Պատրիարք Հայրը յարգանօք ընդունելով զամէնքն, նորանոր տեղեկութիւններ առնելով Ընկերութեան վիճակին վրայ, և պատասխանելով ուղերձին, ըսեր թէ իւր պարտաւորութիւնն է՝ պաշտպան կանգնիլ ազգային ամէն ազգօգուտ ձեռնարկութեանց ու ընկերական հաստատութեանց, և մասնաւորապէս Միացեալ Ընկերութեան, որոյ օգտից տեղեակ է արդէն։

— Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան ի նպաստ տրուելիք դաշտային հանդիսի կարգադրիչ Ցանցնաժողովն՝ առաջին նիստն ըրաւ երկուշաբթի Փրէտի Լիոնէ դրամատան մեծ սրահին մէջ, որ իւր տրամադրութեան ներքեւ դրուած էր, և իւր դիւանն ու գործադիր մասնախումբ մ'ընտրեց և այլ քանի մը տնօրինութիւններ ըրաւ։

— Հրդեհի ծանր արկած մը վնաս և վիշտ պատճառեց պատրիարքական փոխանորդ Դեր. Տ. Գէորգ Ծ. վարդապետի Ռուսճուգլեան։ Կիւրակէ ժամը 4ին ատեններն, ի Գումգափու, Նորին գերապատուութեան բնակարանին մէջ հրդեհ պատահելով, ամբողջ բնակարանն այրեցաւ կահ կարասիքն, յորս են թանգարանը, պատուանշանք և պաշտօնական թուղթք։ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն և այլ պաշտօնական անձինք մխիթարեցին Նորին գերապատուութիւնն, և բարեկամք անկողին, վերմակ և այլն, հայթայթեցին։ Կը յուսամք որ պատրիարքական Դեր. փոխանորդ Հօր վիշտն երկարատեւ չլինիր, վասն զի հարուստ է բարեկամներով։

— Ըստ կարգադրութեան Կրօնական ժողովոյ, առաջիկայ հինգշաբթի օրը քուէարկութիւն պիտի լինի՝ վիճակաւ դադարեալ չորս և հրաժարեալ երկու եկեղեցական երեսփոխանաց տեղ ընտրութեան համար։

— Կրօնական ժողովն երկուշաբթի աւուր նստին մէջ տեսնելով Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր կողմանէ պատրաստել տրուած անպաշտօն եպիսկոպոսաց և վարդապետաց ցանկն, առաջնորդական պաշտօնավարութեան յարմար եկեղեցականաց ցուցակ մը յօրինեց, և որոշեց այս ցանկէն 7 ական անուն՝ իբրեւ ընտրելիք ղրկել թափուր դաւառներն, ինչպէս Տրապիզոն, Բաղէշ և Ակն։ Կրօնական ժողովը սոյն նստին մէջ խնդրեց Ամեն. Ս. Պատրիարքէն՝ պատուիրել օգափոխութեան պատճառաւ իրենց եկեղեցիներէն բացակայ գտնուող քահանայից, որ ըստ կարգադրութեան անցեալ տարւոյ՝ կիւրակէ առաւօտ գըտնուին իրենց պատկանեալ եկեղեցիներն, իսկ միւս օրերն առաւօտ և երեկոյ երթան իրենց գտնուած գիւղին եկեղեցիներն։

— Կրօնական ժողովն իւր միամեայ պաշտօնավարութեան տեղեկագիրը պիտի մատուցանէ Ազգային ժողովոյ։

— Կարնոյ Գաւառական ընդհանուր ժողովն, ապրիլ 19 ի նստին մէջ, ըստ առաջարկութեան դիւանին որոշեր է՝ համայն երեսփոխանաց ստորագրութեամբ շնորհաւորական ուղերձ մը ուղղել առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, ի դիմաց բոլոր վիճակին Կարնոյ։

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը չորեքշաբթի երեկոյ գնաց Եէտիգուլէի հիւանդանոցն, և հետեւեալ առաւօտ մատրան մէջ հանդիսաւոր Պատարագ մատուցանելէն յետոյ, հիւանդանոցի բոլոր յարկերը պտըտելով՝ մխիթարեց պատսպարեալները։ Նորին Բարձր Սրբազնութիւնը թէ՛ եկեղեցւոյ մէջ և թէ՛ սեղանին վրայ բարեմաղթութիւններ ըրաւ Օգոստափառ Սուլթանի, Նախարարութեան, Հայ Ազգին, Հիւանդանոցի բարեկեան Հոգաբարձութեան համար, և օրհնեց Հիւանդանոցի Պէղճեան, Պալեան, Տատեան և այլ բարերարաց յիշատակն։ Ս. Պատրիարք Հօր երթուղարձն հանդիսաւոր եղաւ. խումբ մը եկեղեցականք ընկերացած էին Նորին Սրբազնութեան։ Որբանոցին ուսանողք երդ ի բերան ընդառաջ ելան, և որբանոցն այցելած ատեն ուսանողաց կողմանէ ուղերձ մը կարդացուեցաւ։ Ս. Հայրն Հիւանդանոցի դիմացի պարտէզն ալ գնաց, ուր ժողովուրդը բուռն ծափահարութեամբ ընդունեց զինքը։ Նորին Սրբազնութիւնը 10 լիրա նուիրելով ի նպաստ Հիւանդանոցի, մեկնեցաւ, և Սամաթիա երթալով՝ եկեղեցւոյ վերաշինութեան դործն աչքէ անցուց, դոհունակութիւն յայտնեց աշխատաւորաց և մասնաւորապէս Յակոբեան Միքայէլ էֆէնտիի վերակացութեան ու անձնուիրութեան համար, և խոստացաւ աջակցիլ ըստ ամենայնի։ Մեծաւ շնորհակալութեամբ կը հրատարակեմք, թէ ի Պոլիս պանդխտեալ Սեբաստացի սիրելի ազգայինք, հանդանակութեամբ՝ 5300 ղրշ նուիրեցին նոյն օրը Հիւանդանոցի համար։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յարութեան տօնի օրերն ի Գատրգիւղ տեղի ունեցած յուզման պատճառաւ ամբաստանեալ հրէայ Ա.Հարոնին դատը տեսնուեցաւ ամսոյս 1ին և 2ին, Իւսկիւտարի պատժական դատարանին առջև։ Նախագահը, վկայից խօսելէն յետոյ, երբ խօսք տուեր է ամբաստանելոյն, նա յայտարարեր է թէ վկայք սուտ կը խօսին։ Նախագահը խօսքն առ ամբաստանեալն ուղղելով՝ ըսեր է. — «Կը յայտարարես, թէ կինդ և որդիդ ծառին վրայ խրտուիլակ մը շիներ են. եթէ այդպէս է՝ ինչո՞ւ կայենով կոտրեցիր զայն, երբ դրացիք տեսան խրտուիլակ անուանածդդ. եթէ կարեւորութիւն չունէր՝ պարտաւոր էիր չմերձենալ ի նա, և ապացուցանել խրտուիլակ լինելն. ամէն ոք աղատ է՝ ուղածն ընել իւր տան մէջ՝ դրացիներն ու օրէնքն յարգելու պայմանաւ»։ Ամբաստանեալն պատասխաներ է, թէ առանց հետեւանքը մտածելու վարուած եմ։ Երկու քրիստոնեայ ողջիկ ալ դատարանն երթալով ըստ օրինի երդում ըրեր և ծանուցեր են, թէ իրենք ազգականի մը տունը հիւր գտնուած ժամանակ, տեսած են որ Ա.Հարոն պարտիզին ծառին վրայ խաչաձև բան մը դնելով, նորա առջև շրջթունքներն երերցուց, և ապա աճապարանօք քակեց հանեց։ Ընդհանուր դատախազ Ակնահ էֆէնտի պահանջեր է որ Ա.Հարոն պատժուի ըստ 132 դ յօդուածի պատիսական օրինաց, քանի որ քրիստոնէից սդոյ աւուր մէջ պարտեղ ըսուելու յարմար չեղող փոքրիկ բակին վրայ, իբր թէ թռչունները խրտուլացանելու համար, յիշեալ վարմանց մէջ գտնուած է, որոյ նպատակը նախատինք է, և հետեւաբար Դատը գիւղի ծանուցեալ յուզման պատճառ եղած է։ Դատաւորք նոյն օրն առանձնանալով խորհրդակցեր են. բայց վճռատուութիւնը թողեր են առաջիկայ երկուշաբթի աւուր նըստին։

— Մեր թուրք պաշտօնակից՝ մանաւանդ Թերճէմանը Հագիգաթ, որ քանի մը շաբաթէ հետէ անդադար կայսերական կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն մի գնոյն տարապայման բարձրացման վրայ, դոհութեամբ կը ծանուցանեն այսօր, թէ Պոլսոյ քաղաքապետութիւնն հաճեր է ի նկատ առնուլ և հետեւաբար յոյս կայ, թէ մօտերս ի դործ պիտի դրուին պէտք եղած միջոցները՝ մսին գինը մինչև 5½–6 զեղչելու համար, որ անհնար չէ, եթէ ստոյգ է որ ի Նիկոմիդիա մըսին օխան մինչև 5 ղրշ կը վաճառուի, և եթէ՝ թոյլ տրուի որ ամէն ոք ազատ լինի միս վաճառելու, և մնալաճառութիւնը քանի մը անխիղճ շահադիտաց ձեռքը չմնայ իբրև մենաշնորհ, և հասարակութեան հետ չխաղան ըստ հաճոյս իւրեանց։ Սոքա, կըսեն, մինչև իսկ յաջողեր են արդելուլ շրջլուն մնալաճառները։

— Դատական նախարարութիւնն հրամայեր է Ա.յտընի դատական վերատեսչին, դատի ենթարկել Պէրկամայի նախորդ Նայիպ Արապզատէ Իրֆան պէյն, որոյ համար ամբաստանութիւն կայ, թէ պաշտօնավարութեանը ժամանակ կեղծ վճռագիր մը հանած է։

— Կրետէի կուսակալի խորհրդական Համիտ պէյ, ընդհանուր դատախազի օգնականը, թղթակցութեան դիւանին տնօրէնն և վարչական ժողովոյ քրիստոնեայ անդամք հրաժարեր են, և մահմետական անդամք ալ հրաժարելու վրայ են։ Պատճառն յայտնի չէ դեռ։

— Օգոստափառ Սուլթանը Նրշանը Իմթիյազի ոսկի շքադրամը ընծայեր է՝ իւր մասնաւոր քարտուղար Բէշիտ պէյի։

— Հասան Ֆէհմի փաշա, ըստ ոմանց՝ երկուշաբթի, և ըստ այլոց՝ հինդշաբթի մայրաքաղաքս կը հասնի։ Զրոյց կայ, թէ Պերլին գնացեր է, բայց սոյդ չհամարուիր այս զրոյցն։

— Ոստիկանութեան նախարարութիւնը շրջաբերականաւ մը հրահանդ ղրկեր է դաւառներն, որ կանոնաւոր ու բարեկարդ ոստիկանութիւններ կազմելու հոդ տանին։

— Կայսերական կառավարութիւնը 20 լիրա աւելցուցեր է ըՍԹ.քոլմի օսմանեան դեսպան Դարաճա փաշայի ամսաթոշակին վրայ։

— Աւստրիոյ առեւտրականնախարարութեան քարտուղարներէն մէկը երէկ մայրաքաղաքս եկաւ, առեւտրական դաշնադրութեան համար Բ. Դրան հետ բացուած բանակցութեան օգնելու պաշտօնով։

— Գոնեայի կուսակալը տեղւոյն ժողովրդեան մէկ հանրագիրը յղեր է առ նախարարութիւնն ներքին գործոց, որով խնդրուած է որ Օսմանեան Պանքան Գոնեայի մէջ ալ ճիւղ մը հաստատէ, յորմէ կառավարութիւնն ու ժողովուրդը կօգտին և առեւտրական գործառնութիւնք կը դիւրանան։

— Այազբաշայի բնակչաց ոմանք գանգատեր են առ Թերճէմանը Հագիգաթ, թէ գերմանական դեսպանատան մէկ խոհարարը պատերազմ հրատարակած է թաղին համայն կատուներուն ու շուներուն դէմ, և ամեն օր իւր անձային հրացանովը կատու ու շուն սատկեցընելով՝ ծովը փոխադրել կուտայ, և թէ՝ խոհարարին այս վարմանց դէմ մինչեւ իսկ առ դեսպանն բողոքեր են, բայց ապարդիւն մնացեր է իրենց բողոքն։ Թերճէմանը – Հագիգաթ այնչափ կարեւորութիւն չտալով շանց ու կատուաց ՁՆասակար կամ օգտակար լինելու խնդրոյն, առաւելուշադրութեան արժանի կը համարի թաղին մէջ զինուց գործածութիւնն, որ հակառակ է հրատարակեալ արգելքին։

— Օգոստ. Սուլթանը Նրշանը Իմթիյազի ականակուռ շքադրամը շնորհեց Սուրիոյ կուսակալ Համտի փաշայի, և հրամայեց՝ 100 լիրա աւելցնել Նորին Վսեմութեան ամսաթոշակին վրայ, ի Սուրիա կայսերական կալուածոց մատակարարութեան պաշտօնն ալ տալով նմա։

— Օգոստ. Սուլթանը ծանրագին սուր մը ընծայեց՝ կայսերական պալատան բժշկապետ Մավրոյէնի փաշայի։

— Երկրորդ և երրորդ աստիճանի Մէճիտիյէ պատուանշանք բաշխուեցան բաղմաթիւ Յոյն մետրապօլտաց։

— Դատական ու կրօնական գործոց նախարարութեան կողմանէ շրջաբերականաւ պատուիրուեր է Պատրիարքարանաց, որ ամուսնական հրամանագիրք այսուհետև 10 ղրշնոց դրոշմաւոր թղթի վրայ գրուին։ Կըսուի, թէ Յունաց Պատրիարքարանը պատասխաներ է, թէ Թուրքիոյ մէջ Քրիստոնեայ ժողովրդոց ամուսնութիւնը ղուտ կրօնական է, և թէ կրօնական իշխանութիւնը դժուարաւ կրնայ գանձել նոյն իսկ իւր տուրքը, որ 10 ղրուշէն աւելի չէ։

— Ֆէնէրի Յունաց Պատրիարքարանը՝ Բումանիոյ եկեղեցւոյ անկախութիւնը վաւերացնող կոնդակ մը երկու մետրապօլտաց ձեռօք բումանական դեսպանատունը ղրկեց այս շաբթու։ Երկար ժամանակէ, մանաւանդ Բումարիոյ քաղաքական վերջին անկախութենէն հետէ կը յուզուէր այս խնդիրն ընդ մէջ Պատրիարքարանի և Բումանիոյ։ Կրօնական այս անկախութիւնն ստացած են արդէն՝ քաղաքական անկախութիւն ունեցող ուրիշ օրթոտոքս եկեղեցիք։

— Սամսոնի կուսակալ Դօսթաքի Աստոսիտէս փաշայի պաշտօնակութեան համար կղզւոյն ազգային ժողովոյ կողմանէ տրուած որոշման լուրն՝ զոր հերքմամբ հանդերձ հրատարակած էինք անցեալ շաբթու, ստուգուեցաւ։ Ազգային ժողովն այդ որոշումն ըրեր, պատգամաւորութեան մը միջոցաւ կուսակալին հաղորդեր, և պահանջեր է որ անյապաղ մեկնի կղզիէն. իսկ նա պատասխաներ է թէ առանց Բ. Դրան հրամանի չկրնար խախտիլ տեղէն։ Ազգային ժողովը միւս կողմանէ պատգամաւորութիւն մ'ալ Պոլիս ղրկեր է՝ կուսակալին պաշտօնանկութեան որոշման գործադրութիւնը խնդրելու համար։ Ա.յս երրորդ անգամն է, որ սամսունցիք իրենց կուսակալին դէմ կելնեն. առաջին և երկրորդ անգամ չյաջողեցան, վասն զի Բ. Դուռը տեսաւ որ ժողովրդեան մեծագոյն մասը գոհ է անկէց. բայց հաւանական է որ այս անգամ յաջողին, վասն զի դժգոհութեան ձայներն՝ կղզւոյն ներկայացուցիչ ազգային ժողովոյ մեծագոյն մասէն կը բարձրանան։

— Ներքին գործոց նախարարութեան կողմանէ հրատարակեալ շրջաբերական մը կազդարարէ, թէ զինուորական ծառայութենէ ազատ պիտի լինին արու որդիք այն եգիպտացւոց, որ թէպէտ ի Թուրքիա հաստատած են իրենց բնակութիւնը, սակայն եգիպտացի կանանց հետ ամուսնացեալ են. իսկ ի Թուրքիա օսմանցի կանանց հետ ամուսնացեալ եգիպտացւոց արու որդիք պիտի ենթարկին զինուորական ծառայութեան։ Ա.յսպէս պիտի լինի՝ մինչեւ որ կերպիւ ի Թուրքիա զետեղեալ Պարսից համար։

— Ծովային նախարարին տիկինն ու դուստրն երեքշաբթի կայսերական պալատն հրաւիրեցան, և Շէֆգաթի պատուանշանը տրուեցաւ Նորին վեհափառութեան կողմանէ։

— Դատական նախարարութիւնը, ըստ առաջարկութեան վաճառականական Սենեկին Պոլսոյ՝ ծանուցեր է առեւտրական դատարանաց, որ այսուհետև ի նախաքննութիւն առ յիշեալ սենեակն յղեն՝ ոնանկութիւն հրատարակելու համար տրուած խնդրագրերն։

— Առեւտրական Սենեակն առաջարկեր է, որ ի դիւրութիւն անակնկալ ուղևորութեան վաճառականաց որոշուի, անցագիր ըստանալու համար բաւական համարիլ՝ Առեւտրական Սենեկի կողմանէ վաճառականաց տրուած վկայագիր մը։

— Փիլիպէի ռուսական հիւպատոսն և հելլենական դերհիւպատոսը մայրաքաղաքս եկած են՝ դեսպանաց մանրամասն տեղեկութիւն տալու համար այն անցից ու յարձակման վրայ, որ Ս. Դէորգայ տօնին օրն յիշեալ քաղաքին մէջ տեղի ունեցաւ պուլղարաց կողմանէ, հելլենական դրօշն անպատուեցաւ և յոյնք վնասեցան։ Նահանդապետը հելլենական հիւպատոսարանը գնացեր է ցաւ յայտնելու համար, սակայն չէ ընդունուեր հիւպատոսէն։ Կըսուի, թէ հիւպատոսը ծանուցագիր մը ուղղելով առ նահանդապետն, պահանջեր է որ փոխարինութիւն լինի հելլենական դրօշին անարգման համար, հատուցում տրուի հելլեն հպատակաց կրած վնասուց համար, և խստիւ պատժուին յարձակման և անկարգութեանց առաջնորդք։ Ըստ Սթամպուլի՝ այս հիւպատոսը Սէլանիկի հիւպատոս անուանուեր է, և մօտերս Պոլիս գալով՝ պիտի երթայ նոր պաշտօնատեղին։

— Ա.յսուհետև ո՛չ թէ ոստիկանութեան դրնէն, այլ ներքին գործոց պաշտօնատան մարդահամարի դիւանէն պիտի տրուին՝ արտաքոյ Թուրքիոյ ուղևորող պետական պաշտօնատարաց անցագիրք։

— Ոստիկանութիւնն, ըստ ազդարարութեան ներքին գործոց նախարարութեան, այսուհետև առաւել աշխրջութեամբ պիտի հսկէ և քննէ Պոլսէն ուղևորող և ի Պոլիս մտնող անձանց, անցագրերը։

— Պաղտատի բանտն յանկարծ փլչելով՝ երեք բանտարկեալք մընացեր են փլատակաց ներքև։

— Բաքէ ընկերութեան Ռիւսի անուն շոգենաւն, որ 72000 գրիւ ցորեն և 32000 գրիւ եգիպտացորեն բեռնաւորեալ էր, Սինոպի մօտերն ալեկոծութեան բռնուելով ընկղմեր է Ասմա-Գայա կոչուած տեղը։ Նաւաստիք, 32 հոգի, ազատուեր են։

— Յունաց Ս. Պատրիարքը դարձեալ հիւանդացեր է ծանպէս։

— Զանդրրիի մէջ (Գասթամունիի նահանգ) անցեալ շաբթու հրդեհ պատահելով՝ շուկային մեծ մասն՝ 250 էն աւելի խանութ, պանդոկ մը և այլ քանի մը չէնքեր այրեցաւեր եղեր են։ Բոլոր գնասը 6000 լիրա կը հաշուեն։

— Դատական նախարարութիւնը վաւերացոյց փաստաբանաց խորհրդոյ նորընտիր դիւանն, որոյ անդամք են Վիչէն Սէրվիչէն էֆէնտի՝ նախագահ, Մէհմէտ Ռէշիտ էֆէնտի՝ դեր նախագահ, Յակոբ Պօշնագեան էֆէնտի՝ գանձապետ և քարտուղար, և Հասան Թահսին ու Գէորգ Մարտիրոսեան էֆէնտիներն՝ անդամ։

— Նախորդ ամսոյ 28ին, Զէթինէ օղլու Մուսթաֆա անուն Մահմետական մը փորձեր է հրդեհել Պանտըրմայի ծովեզերքը գտնուող վառոդարանը, քարիւղով թաթախեալ ծրար մը ձգելով վառոդարանին կից հիւղիկի մը մէջ, որոյ քով քարիւղի մթերանոց մը կայ։ Բարեբաղդաբար չուտով իմացուեր և առաջքն առնուեր է։ Քաղաքին բնակիչք այս փորձէն ահաբեկեալ՝ կառավարութենէն խնդրեր են քաղաքէն դուրս տեղ մը փոխադրել վառոդարանը։

— Սէլիմիյէ զօրանոցի մերձաձակայ փողոցի մը մէջ բնակող Հավա անուն դեղեցիկ կին մը՝ մկընդեղով սպաններ է ինքզինքն։

— Դալաթիա մանկամարդ Յոյն կին մը՝ որ ժամանակէ մը հետէ խելագարեալ է եղեր, ինքզինքը տանը պատուհանէն վար նետեր և մեռեր է։

— Բերայի ազնուականաց մին պնդեր է, թէ կրնայ Բերայէն մինչեւ Թարապիա հետիոտն երթալ երեք ժամու մէջ, և ուրիշ մը խոստացեր է 50 լիրա տալ, եթէ յաջողի։ Ա.յս դրաւին վրայ, պարոնը ճամբայ ելեր, և 2 ժամ ու 59 վայրկենի մէջ հասեր է Թարապիայի հռչակաւոր օթեւանն։ Բարեկամներն ալ հասնելով կառօք, շքեղ խնճոյք մը ըրեր են, և խոստացեալ 50 լիրան Իտալիոյ Հիւանդանոցին տրուեր է։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 4 Մայիս 1885

Օսմանեան Գոնսոլիտէ . . .	17—22
Բումէլիի Երկաթուղի . Ֆրանգ	42—75
Թրամուէյ . . . . . Լ. Օ.	2—67

ՓՈՒՆՋ

Օտարեան լիրան 100 ղրուշէն

Մէճիտիյէ	107—37
Մէթալիք	99 —
Հինգնոց	102—25
Վեցնոց	102—30
Ռուպլի թղթադրամ	9—
Ռուպլի արծաթ	89—30
Ռուսիոյ Բոլ	90—18
Գաղղիական լիրա	87—31
Անգղիական »	110—20
Գրիվնից	51—15

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

= Աֆղանեան խնդրոյն վրայ խաղաղական լուրերը կը շարունակեն այս շաբթու ալ։ Ռուսիոյ և Անգղիոյ կառավարութիւնք առ այժմ թուլայուցած են զինուորական պատրաստութեանց գործը։ Անգղիոյ նախարարապետ Պ. Կլատսթոն՝ որ տակաւին քանի մը շաբաթ յառաջ ազգային Խորհրդարանին մէջ յանուն ազգային պատուոյ և ազդեցութեան ի պատերազմ կը դրդէր զԱնգղիա մեծաւ ճարտարախօսութեամբ, մի և նոյն ոգւով չերևցաւ վերջին ատենախօսութեան ժամանակ։ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Պ. Կիէրս ալ՝ որոյ համար կըսուի թէ պատերազմէ կը խորշի, և մինչև իսկ լուր ելաւ քանի մը շաբաթ յառաջ, թէ կը հրաժարի՝ զինուորականաց ռազմասիրական ձգտումները տեսնելով, — յայտներ է մեծ ժողով մը գումարել տալ ընդ նախագահութեամբ Զարին, և իւր խաղաղասիրական աշխարհավարութիւնն հաճելի ընել։ Պ. Կլատսթոն, ազգային ժողովոյ Մայիս 4ի նստին մէջ ըսեր է «պետութեան մը իրաւարարութեան պիտի յանձնուի՝ Ռուսիոյ հետ կնքեալ Մարտ 16ի պայմանագրին բացատրութեան համար վերելած անհամաձայնութեան խնդիրն։ կը յուսամ թէ դժուարութիւն չպիտի տեսնուի յայսմ մասին. իսկ Աֆղանստանի սահմանաց խնդրոյն վրայ ի Լոնտոն անյապաղ պիտի սկսին բանակցութիւնք Ռուսիոյ և Անգղիոյ մէջ, և մանրամասնութիւնք պիտի քննուին վէճի ենթակայ տեղը որոշեալ պայմաններով կարգեալ յանձնաժողովոյ մը միջոցաւ»։

Ըստ վերջին հեռագրոց՝ Ռուսիոյ կառավարութիւնն հաւաներ է թողուլ զԶուլֆիքար, որ Հերաթէն 130 քիլոմեթր հեռի է, և մեծ կարևորութիւն ունի՝ Հերաթ տանող ճանապարհը լինելուն համար։ Սակայն, հեռագիր մը կը յաւելու, թէ Ռուսիա՝ ի փոխարէն Զուլֆիքարի՝ բաղում արօտավայրեր կը պահանջէ Ռուսիոյ հպատակ թիւրքմէն խաշնարած ցեղերու համար։

= Իտալիոյ թագաւորն ու թագուհին, դահաժառանգ իշխանին և բարձրաստիճան նախարարաց սմանց հետ Նաբոլի գնացեր են։ Տեղւոյն բոլոր պաշտօնակալք ընդառաջ ելեր են երկաթուղւոյն կայարանն. անհամար բազմութիւն ժողովրդեան խռնելով ճանապարհաց վրայ՝ սիրոյ և համակրանաց յայտարարութիւններ ըրեր, և ծաղիկներով լցեր են թագաւորին ու թագուհւոյն նստած կառքը։

= Ամսոյս 10ին կը գումարի ի Հռովմ առողջապահական միջազգային դեսպանախորհուրդը։ Գաղղիոյ կառավարութիւնն ալ որոշեր է պատուիրակ ղրկել։

= Ռուսիոյ կառավարութիւնը մտադիր է՝ գործակատարութիւն մը հաստատել ի Կալկաթա, Հընդկաստանի անգղիական կառավարութեան հետ ուղղակի քաղաքական յարաբերութեանց մէջ գտնուելու համար։

= Ֆանիմարքայի թագաւորն ընդուներ է իրաւարար կանգնիլ ընդ մէջ կառավարութեանց Անգղիոյ և Ռուսիոյ։

= Անգղիոյ զինուորական գործոց նախարար լորտ Հարթինկթըն ծանուցեր է Ազգային ժողովոյ մէջ, թէ Խարթումի արշաւանքը բոլորովին ի բաց պիտի թողուի, և Սուտան ալ պիտի պարպուի։

= Զրոյց կայ, թէ Ռուսիոյ ոստիկանութեան կողմանէ ձերբակալուեր է Պաթումի անգղիական հիւպատոսն, Պաքուի շոգեկառքը մնատ ժամանակ։ Հիւպատոսն արդէն ընդ կասկածանօք է եղեր, դէպ ի Կարս՝ Արտահան՝ Օլթի, Արտանոյշ, Լայլն, ուղեւորելուն, Կասպից ծովու նաւահանգիստները շրջագայելուն, և կարեւոր բերդի մը յատակագիծը շինելուն համար։

= Իտալիոյ կառավարութիւնն՝ որ վերջին ժամանակներս փոյթ կը տանի իւր ծովային ու ցամաքային զօրութիւններն աւելցընելու համար, 100 խոշոր թնդանօթ կը գնէ Ամերիկայէն։

= Զինաստանի կառավարութիւնն՝ որ Եւրոպացիներէ և Եւրոպական մեթոտներէ կը խորշէր, ի բաց թողլով ամենայն նախապաշարումն՝ սկսեր է Եւրոպական մեթոտով և Եւրոպացւոց ձեռօք բանեցնել երկրին ածխահանքերն։

= Կրանդ Ատմիրալ ռուսական զրահաւորին մէջ, որ ի Փըրսնշդատ կը վերադառնայ եղեր Մալթայի առջև՝ առաջին հրամանատարին ցամաքը գտնուած ժամանակ, նաւաստիք ըմբոստութեան շարժումներ ըրեր են՝ որոյ պատճառն առ այժմ յայտնի չէ, և երկրորդ հրամանատարն մեծաւ խստութեամբ վարուած լինելով՝ ըմբոստք առաւել զայրացեր են, որով հարկ եղեր է շրջթայապիրկ ընել անոնցմէ 20ը։

= Խրուադայ ազգային խորհրդարանին մէջ, յԱկրամ, ծայրայեղ երեսփոխանաց ոմանք ըսեր են թէ «Ռուսիա և Զարն անշուշտ կը գոհացընեն զԼիրուանթս, եթէ Աւստրիոյ կայսրութիւնը չը գոհացընէ զնոսա»։ Նահանգապետն յուղղութիւն հրաւիրեր է խօսողները, դիտելով թէ չարաչար կը գործածեն Ազգային ժողովոյ ազատութիւնն, այդպիսի լեզու մը գործածելով, որ անպատիժ չմնար, եթէ փողոցի մը մէջ կամ այլուր գործածուի։

= Վերջին օրերս, Նեղոսի ջուրց տարածման տեղատուութեան պատճառաւ, ծովը քանի մը մղոն յառաջացեր է ի Նեղոս, և Ռոզէդէ անգին անցեր է, բաղում վնաս տալով։ Ժողովուրդը չկրնար գտնել անոյշ ջուր, և իշխանութիւնը նաւերով ու շոգեկառքերով սնոյշ ջուր կը ղրկէ վերին գաւառներէն։ Անասունք դունդադունդ կը սատակին, Ռոզէդէն քանի մը մղոն վեր լեղեսցած ջուրէն խմելով։ Բամբակի և բրնձի արտորայք յոյժ վնասուեր են։ Վերին Նեղոսէ փոխադրեալ անոյշ ջուրն ամենաբարձր դիներով կը վաճառուի եղեր։ Երաշտութեան պատճառաւ երկիւղ կայ, թէ այս վիճակը պիտի տեւէ մինչեւ Յուլիս։

= Ի Պէրլին բռնուեցաւ գործաւոր մը, որ քար մը նետած էր կայսերական պալատան մէկ պատուհանէն ներս, կայսեր՝ պալատը չգտնուած ժամանակ։

= Ռուսիոյ ներքին գործոց նախարար Թոլստոյ կոմսն՝ որ Գըրիմ կը գտնուէր դարմանի և հանգըստեան համար, եղեր է անտի՝ ըստ ոմանց, Բեռդրսպուրգ վերադառնալու, և ըստ այլոց՝ Մոսկուայի մօտակայ կալուածներն երթալու համար։

= Սերպիոյ գահուն հետամուտ վախճանեալ Գարաեօրկէվիչ իշխանի հօր յուղարկաւորութեան հանդէսը մեծաւ շքով կատարուեր է ի Թիշվար, և մարմինն ամփոփուեր է ի Վիէննա։ Սերպիական դեսպանը ներկայ չէ գտնուեր հանդիսին։ Աւստրիոյ և Ռուսիոյ կայսերք, Սպանիոյ նախկին թագուհին ու Գարատաղի իշխանը վշտակցութեան դիրեր ուղղեր են առ ընտանիս վախճանելոյն։ 4 միլիոն ֆրանք հարստութիւն թողեր է, ի բաց առեալ 100 հազար ֆրանքի դումար մը, զոր կտակեր է Սերպիոյ՝ Պոսնիոյ և Հերսէքի աղքատ ուսանողաց համար։ Վախճանեալն՝ Սերպիոյ անկախութեան հիմնադրին որդին էր, և ինքն ևս ժամանակաւ իշխած է Սերպիոյ։ 1806ին ծնած էր։ Երեք որդի կը թողու, որոց մին է Բեռդեր Դարաեօրկէվիչ՝ Սերպիոյ գահուն հետամուտ, որ Գարատաղի իշխանին փեսայն է։

= Ռուսիոյ կայսրը, Կատարինէ Բ. կայսրուհւոյն կողմանէ 100 տարի յառաջ ռուս ազնուականութեան տրուած առանձնաշնորհմանց տարեդարձին առթիւ, Ապրիլ 21 թուով հրամանագրով մը հաճեր է հաստատել հողային Պանգա մը՝ նեղութեան մէջ գտնուող ազնուական կալուածատերաց օգնութեան համար, և այս՝ ի փոխարէն այն ծառայութեանց, զոր Ազնուականութիւնը մատուցած է կայսերական գահուն։

= Ռուսիոյ կայսրն ընդունելով Պուլղարիոյ իշխանին մէկ հեռագիրն, որով Սրբոց Կիւրեղի և Մեթոտիոսի տարեդարձին առթիւ Պուլղարիոյ երախտագիտութիւնը մատուցեալէր, — շնորհակալութիւն յայտներ և ըսեր է, թէ «Վըստահ եմ որ կրօնակցութեան և ցեղակցութեան կապերն, որովք Պուլղարիա կը միանայ Ռուսիոյ հետ, յաւիտեան պիտի մնան անքակ»։

= Սոֆիայի անգղիական հիւպատոսարանի երկու սպասուհիք Գուրու-Պաղլար ըսուած տեղը շրջագայած ատեն, զինուորական վարժարանի բարձրադոյն կարգէն երեք աշակերտք և տանապետ մը յարձակելով՝ նոցա պատիւը բռնաբարեր և թանկագին նիւթերը կողոպտեր են։ Կըսուի, թէ Պուլղարիոյ արտաքին գործոց տեսուչն հիւպատոսարան երթալով ցաւ յայտներ և ծանուցեր է թէ կառավարութիւնը պատրաստ է 150 հազար ֆրանք տալ, պայմանաւ որ չծանուցուի Անգղիոյ կառավարութեան և բռնաբարելոց ընտանեաց, սակայն հիւպատոսը չէ ընդուներ, և պնդեր է որ պատժուին չարագործք։

= Զինաստանի կառավարութիւնն այս օրերս կուզէ դարձեալ բանակցել յուղղութիւն Մանչուրիոյ սահմանաց՝ այն կէտերուն, զորս չինական հող կը համարի, և կըսպառնայ դիմել ի զէն եթէ բանակցութեամբ չկարգադրուի։ Ռուսիա, ի Կեդրոնական Ասիա յառաջդիմութեան մէջ այսպէս դժուարութիւն կը տեսնէ ո՛չ միայն Անգղիոյ այլև Զինաստանի կողմանէ, և կը կարծուի թէ երբ Ռուսաստան, որ Գարատաղի իշխանին փեսայն է։

= Ռուսիոյ կայսրը, Կատարինէ Բ. կայսրուհւոյն կողմանէ 100 տարի յառաջ ռուս ազնուականութեան տրուած առանձնաշնորհմանց տարեդարձին առթիւ, Ապրիլ 21 թուով հրամանագրով մը հաճեր է հաստատել հողային Պանգա մը՝ նեղութեան մէջ գտնուող ազնուական կալուածատերաց օգնութեան համար, և այս՝ ի փոխարէն այն ծառայութեանց, զոր Ազնուականութիւնը մատուցած է կայսերական գահուն։

= Ռուսիոյ կայսրն ընդունելով Պուլղարիոյ իշխանին մէկ հեռագիրն, որով Սրբոց Կիւրեղի և Մեթոտիոսի տարեդարձին առթիւ Պուլղարիոյ երախտագիտութիւնը մատուցեալէր, — շնորհակալութիւն յայտներ և ըսեր է, թէ «Վըստահ եմ որ կրօնակցութեան և ցեղակցութեան կապերն, որովք Պուլղարիա կը միանայ Ռուսիոյ հետ, յաւիտեան պիտի մնան անքակ»։

= Սոֆիայի անգղիական հիւպատոսարանի երկու սպասուհիք Գուրու-Պաղլար ըսուած տեղը շրջագայած ատեն, զինուորական վարժարանի բարձրադոյն կարգէն երեք աշակերտք և տանապետ մը յարձակելով՝ նոցա պատիւը բռնաբարեր և թանկագին նիւթերը կողոպտեր են։ Կըսուի, թէ Պուլղարիոյ արտաքին գործոց տեսուչն հիւպատոսարան երթալով ցաւ յայտներ և ծանուցեր է թէ կառավարութիւնը պատրաստ է 150 հազար ֆրանք տալ, պայմանաւ որ չծանուցուի Անգղիոյ կառավարութեան և բռնաբարելոց ընտանեաց, սակայն հիւպատոսը չէ ընդուներ, և պնդեր է որ պատժուին չարագործք։

= Զինաստանի կառավարութիւնն այս օրերս կուզէ դարձեալ բանակցել յուղղութիւն Մանչուրիոյ սահմանաց՝ այն կէտերուն, զորս չինական հող կը համարի, և կըսպառնայ դիմել ի զէն եթէ բանակցութեամբ չկարգադրուի։ Ռուսիա, ի Կեդրոնական Ասիա յառաջդիմութեան մէջ այսպէս դժուարութիւն կը տեսնէ ո՛չ միայն Անգղիոյ այլև Զինաստանի կողմանէ, և կը կարծուի թէ երբ Ռուս-

ՈՍԿԻՈՅ ԶԱՂԱՑՔԸ (*)

Սալոմէ արդէն կը տարակուսէր տիկին Իւրսիի բարի լինելուն վրայ։ Սալոմէ քիչ մը վախկոտ եղած էր։ բայց իրարու հետ չատախօսելով տակաւ յարած էր առ նա։ գթութեան բառ լսելու քիչ վարժուած էր, եւ չէր կըրնար հասկնալ թէ Իւրսիլ ինչո՞ւ բարեկամութեամբ կը վարուէր իրեն հետ։ Սալոմէ՝ չարաբաղդութեան դպրոցի մէջ մեծցած՝ չէր գիտեր դեռ թէ ամեն պատիժ, որ կենդանի է, յառաջ կը բերէ փափուկ ծաղիկ մը բարեսրտութեան եւ երջանկական գթութեան։ Բարի կինը կը խօսէր, վստահութեամբ բանալով սիրտը՝ մանկամարդ աղջկան։ Նորա խօսից մէջ ո՛չ թերեհաւատութիւն եւ ոչ կասկած կար։

— Հայրենիքդ եղական անուն մը ունի, զաւա՛կս, կըսէր պառաւն, երբ երեկոյին կը խօսէր Սալոմէի հետ։ սոյն անունը (Ոսկեոյ Զաղացք) անհաճոյ է ինձ։ կարելի է՝ ա՛յն չար մեռաղը չսիրելէս եւ ամէն փայլող բաները չյարգելէս յառաջ կուգայ։ իմ Նիքոլայիս կողմանէ ինձ տրուած նշանտութեան մատանին արծաթեայ էր։ երբէք դեղին մետաղը չանցնիր ձեռքէս։ թէպէտ կրնամ անունը տալ, բայց կը տեսնես աղաւնեա՛կս, սարսուռ մը կզգամ։ երբ մէկուն ձեռաց մէջ նորա փայլիլը տեսնեմ, աչքս կը դարձընեմ։ տե՛ս, զաւա՛կըս, մարդ ո՛րչափ կը տկարանայ, երբէք այսպէս եղած չեմ։ — երբ իմ Նիքոլաս ձեռքս խնդրեց, դեռ կատարեալ տղայ մ'էի։ կը մտածէի դրամի, հարստութեան, արդուզարդի եւ բոլոր այս տեսակ բաներու վրայ, բայց Նիքոլաս բոլոր ասոնցմէ աւելի սիրելի էր ինձ։ վասն զի կը պաշտէի զնա, եւ այնքարհիս ամենաերջանիկը կը համարէի զիս։ Այն ատեններն եթէ երբէք լայի, ուրախութեան արտասուք էր որ կը թափէի։ ուրախութիւնը սովորաբար կը փայլէր չրթանցս վրայ։ աւա՜ղ, կեանքն յոյժ դեղեցիկ էր ինձ համար, եւ ամենաբարին Աստուած՝ ողորմած ինձ համար։ ուրախութիւնս պիտի փոխուի եղեր արտասուաց։ փորձառութիւնն ինձ պիտի սորվեցընէ եղեր՝ ճանչնալ իմ Փրկիչս։ Նիքոլաս գիւղին դպրոցին ուսուցիչն էր, եւ ինչ չատ տարիքոտ, լուրջ էր եւ ուղիղ բնաւորութիւն մ'ունէր, բարի էր եւ լաւ կը հասկնար իւր կոչումը։ երգէն կը նուազէր քաջ եւ լաւ կ'երգէր։ քիչ մը երազող լինելով կը սիրէր հրաշալի բաներն։ ամուսնոյս սոյն եղականութիւնք չէին այլայլեր իմ երջանկութիւնս։ մեր եկամուտը, թէպէտ փոքր, կը բաւէր թէ՛ մեզ եւ թէ՛ մեր Սեղան եւ Բիէր որդւոց, որ ինձ աւելի սիրելի էին քան ամէն զոհարմները։ այն ատեններն ոմանք սկսան ուրանել փիլիսոփայական քարն ու կը կարծէին ոսկի չինել։ այս կարծիքը պատճառ եղաւ Նիքոլայիս կորստեան։ առաջին անգամ բաղմազան հեղուկներ տեսնելի մը մէջ դնելուն եւ յետոյ զիշերները եփելուն կարեւորութիւն չտուի։ բայց երբ ուսուցչութեան նուազ թոշակը թանկագին դեղերու գնման համար վատնեց, երբ սկսաւ հագուստներն, եւ հնայելով արտասուացս եւ աղաչանացս՝ տան կարասիքն հետզհետէ վաճառել եւ իրր անմիտ թափառեցաւ, յայնժամ գիշերներս եւ ցերեկներս ի ծունր կանգնէի, աղաչելով զԱստուած որ զիս ազատէ։ տունը ոչ հաց ունէինք ուտելու, եւ ոչ ալ ցընցոտի՝ հագնելու։ գիւղային ժողովը տեսնելով ամուսնոյս մոլորեալ վիճակը՝ ճանրաց տուաւ։ սոյն վերջին հարուածը ջախջախեց զՆիքոլա, եւ բոլորովին խենդեցաւ։ Աչքիս առջեւ իրենց հողին աւանդեցին երեք անձինք, որք ինձ ամեն բանէ աւելի քաղցր էին յաշխարհի։ մեծ թշուառութեան մէջ լինկայ։ բայց դարձեալ յոյսս չկտրեցի Աստուծոյ, որ առ ի փորձ զայս ամենայն ընելէն յետոյ՝ ազատեց զիս, շնորհելով այժմեան տէրս, որում կը ծառայեմ բազում տարիներէ հետէ եւ պիտի ծառայեմ ցմահ։ չուզեցի ընդունել ամուսնոյս, սակայն նա ա՛նպիսի բաներ չընդունիր։ բայց այսօր ի՞նչ եղաւ տէրս։ ընթրիքը սեղանին վրայ է եւ դեռ չէ հատած։ վիշտ մը ունեցաւ է։

Պառաւն ու որբը դեռ մէկ քանի ժամ իրարու հետ խօսեցան։ Արեգակը բաւական ատենէ ի վեր մարը մըտած էր, եւ փոքրիկ սենեակը լուսաւորեալ էր միայն լուսնի լուսով։ Սալոմէ, սիրտը քաղցր յուզմամբ լի, մօտենալով առ Իւրսիլ՝ երկու ձեռքը նորա վիզը նետեց եւ ըսաւ լալագին։

— Սիրելի տիկի՛ն, դուք բարի եւ ջերմեռանդ էք, սիրեցէք զիս։ միայնակ եմ աշխարհի մէջ եւ չունիմ մայր մը որ զիս մխիթարէ։ դուք իմ մայրս եղիք, օգնեցէք ինձ, եւ թող ձեր շնորհիւը գտնեմ տեղ մը, ուր կարենամ ծառայել եւ պատսպարուիլ։ այս օր ինձ պատկանեալ բաները չեմ կըրնար ըսել ձեզ։ վաղ առաւօտ պիտի մեկնիմ կատարել ի՛նչ որ խոստացած եմ մօրս։ բայց եթէ տայ Երկինք, որ ետ դառնամ, զիս մի՛ ճանչեր, եւ վստահեցո՛ւր զիս որ պիտի կարենամ սիրել զձեզ։ ։

— Ո՜հ, այո՛, Սալոմէ՛, ըսաւ Իւրսիլ՝ բռնելով մանկամարդ աղջկան երկու ձեռքը, Աստուած զքեզ ղրկած է առիթս, դու իմ Սիւզանս ես զոր Աստուած յարուցած է ի մխիթարութիւն իմ վերջին օրերուս մէջ։ անկողնիդ պիտի պատրաստեմ քովիկս։ Ըսածին պէս ալ ըրաւ։ Առաւօտուն կանուխ Վալթէր կանչեց զՍալոմէ։ Վալթէր գիշերի մեծ մասը գրելով անցուցած լինելու էր, վասն զի բազում նամակներ կային սեղանին վրայ։

— Ասոնք բոլորն ալ հետդ պիտի առնես, զաւա՛կս, ըսաւ, եւ պիտի ցրուես իրենց հասցէներուն։ կուզէի զքեզ քովս պահել եւ ես անձամբ թըղթակցութեամբ որոնել թշուառ օտարականին ընտանիքը, բայց մօրդ կամաց հակառակ վարուիլ է։ եւ բաց յայսմանէ, ո՛ գիտէ, թերեւս այս կարելի լինի անաղարտ պահել հօրդ յիշատակը։ գնա՛, Աստուած քեզ առաջնորդ եւ պահապան պիտի լինի։ Աստուած յաճախ կընէ մեծ գործեր սակարաց եւ փոքրիկանց ձեռօք։ ճանրորդութեանդ պէտք եղածին չափ ըստակ ա՛ռ եւ ես պիտի տամ, վասն զի ժառանգութեանդ սահմանեալ է գոցել Ոսկեոյ Զաղացքին մէջ անօգուտ կերպիւ պահուած դրամին տոկոսն, սակայն եթէ դու միշտ յօժարութիւն ցուցընես։ ։ ։ արդ կուտա՞ս ուրախութեամբ բոլոր հարստութիւնդ՝ տեղի ունեցած անարդարութեան իբր հատուցում։ երբէք երեսի վրայ չպիտի մնաս եւ նեղութիւն չպիտի կրես։ մի զարմանար երբէք։ եթէ ճանապարհորդութեանդ մէջ, ի Պավիէրա, վասն զի հոն պիտի երթաս, պատահիս աւելի քան զիս արտասուող մարդոց։ ես զքեզ պիտի ղրկեմ այնպիսի մարդոց քով որք լաւ վարկ ունին եւ որոց քով կրնաս կենալ անվրկիւղ։ վերջին նամակը կը պարունակէ մի հրաման առ վաճառական մը՝ հասցընելու համար դրամը ժառանգորդաց ձեռքն, եթէ զանոնք գտնել յաջողիս։ Կաղաչեմ զԱստուած, որ գտնես զանոնք։ վասն զի չարաչար չահուած դրամ բընաւ օգուտ չընծայեր։ գնա, զաւա՛կըս, Տէրն հետդ լինի, եւ հրեշտակն յաւիտենականին առաջնորդէ քեզ։

(Մնայեալն՝ յաջորդով)

(*) Տե՛ս Ռէ՛ 1939

սիա Անդղիոյ հետ ի պատերազմ մտնէ, Զինաստան պիտի դաշնակցի Անդղիոյ։

= Կը պատմուի, թէ Անդղիոյ գահաժառանգ իշխանին ու իշխանուհւոյն յիրլանտա վերջին այցելութեան ժամանակ, ի Տրպլին խնճոյքի մը մէջ, սեղանակից մը երբ ի հաճոյս իշխանուհւոյն խօսեր է ընդդէմ Իրլանտացւոց, իշխանուհին պատասխաներ է, թէ պէտք չէ մոռնալ սակայն Իրլանտիոյ ժողովրդեան կրած բազում հարստահարութիւններն ու չարիքը։ Իշխանուհին դուստր է Թագաւորին Տանիմարքայի, որոյ դերը՝ «Իմ ոյժս՝ իմ ժողովրդեան սիրոյն մէջ կը կայանայ» նշանաբանն ունի։

= Անդղիոյ կառավարութիւնն որոշեր է մեղմացնել Իրլանտիոյ եղեռնադատ օրէնքն, որ երկրին որճրագործներն ու կասկածելի անձերն ձերբակալելու և պատժելու բացառիկ տրամադրութիւններ ունի։

= Դարձեալ լուր կայ, թէ Հայաստանի հռչակաւոր զօրավար կոմս Լորիս Մելիքեանց, որ ի Դաղղիա կը գտնուի, մօտերս պիտի վերադառնայ ի Ռուսաստան, ղինուորական բարձր պաշտօնի մը համար. և թէ՝ ընտանիքն, որ պիտի մեկնէր Բեռլրսպուրկէն, մնացած է այս պատճառաւ։

= Վարշաւիայէն տեղեկութիւն տրուած է եւրոպական լրագրաց, թէ Բոլոնիոյ մէջ ազգային լեզուն արտաքսուած է դատարաններէն, վարչութենէն եւ դպրոցներէն, թէ միջնակարգ վարժարանաց ուսանողք կը պատժուին՝ եթէ յանդգնին իրենց մայրենի լեզուաւ խօսիլ դպրոցի մէջ, թէ նախկին Բոլոնիոյ մէկ մասին մէջ հրապարակները բոլոներէն խօսիլ արգիլուած է ոստիկանութեան հրամանաւ, ինչպէս նաեւ գնել կամ վարձել անշարժ կալուածներ։ Բոլոնիացիք կըսեն եղեր, թէ «ներկայ դարուս մէջ ամենատկար ազգութիւնք իսկ չեն կորնչիր ; ցորչափ կը պահեն ազգութեան հաւատքը. ժողովուրդ մը՝ որ 12 միլիոնէ կը բաղկանայ, և ունի տասնդարեան պատմութիւն մը, մշակեալ լեզու, ճոխ գրականութիւն, չՀնչուիր պետական պարզ քմահաճութեամբ։ Կանցնին կերթան ամենահզօր պետական մարդիկն իսկ, և կը փոխուին դրութիւնք, բայց երկարակեաց կը մնայ մեծ ժողովուրդ մը։ Ահա այժմ յոյժ լաւ է Կալիչիոյ Բոլոնիացւոց վիճակն, և յԱւստրիա կը յարգուի Բոլոնիական ազգութիւնն, մինչդեռ տակաւին քիչ ժամանակ յառաջ ջնջման վիճակի մէջ էր»։

= Հնդկաստանի փոխարքային հետ Աֆղանստանի Էմիրին վերջին տեսակցութեան արդեանց մին եղած է՝ աֆղանեան բանակը վերակազմել աշակցութեամբ կառավարութեան Անդղիոյ։ Արդէն 10 հազար Մարթինի հրացան, 10 հազար Շնայտր հրացան և մէկ միլիոն փամփուշտ նուիրուեր է Էմիրին՝ Անդղիոյ կողմանէ։

= Թայմսի Փարիզեան թղթակիցն՝ իւր մէկ հեռագիրը սա տողերով կը վերջացնէ։ — «Ռուսիա պատերազմ կուզէ. վասն զի, նախ կամբարտաւանի, թէ իւր այդ ապարբերութիւնն անպատիժ կը մնայ. երկրորդ՝ թէ Սքիրնէվիսէի տեսակցութեան մէջ վաւերացեալ ծրագիրը կը գործադրէ։ Անդ կայսերաց տեսակցութեան մէջ ըսուած է Ռուսիոյ, թէ ինքն կրնայ ընել Կեդրոնական Ասիոյ մէջ ինչ որ կամի, պայմանաւ որ բիւզանդական երազներն ի բաց թողու։ Պիզմարդ իշխանը չորս պատճառ ունի՝ զՌուսիա Ասիոյ խորերը քշելու. 1.– Գերմանօ-աւստրիական դաշառաց և Հոլանտայի մէջ գրաւելիք երկրաց փոխարինութիւն մը տալու համար նմա յԱրևելս. Հոլանտա ագան կամ անագան պիտի կցուի Գերմանիոյ. 2.– Սլաւութիւնը դէպ յԱսիա վտարելու համար. 3.– ԶԱնդղիա տկարացընելով՝ նորա գաղթականութեան առևտուրին մէկ մասը գրաւելու համար. 4.– Ռուսիոյ մէջ անխուսափելի եղող ընկերվարականաց յեղափոխութեան հարուածէն ապահովելու համար զԳերմանիա։ Զորս թրքուքն՝ մէկ քարով»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

××× Ինչ՞ համար բաղարտ ալ՝ պարտ են։ — Գերմանական ընտանեկան Հանդէս մը սա՛պէս կը պատասխանէ այս հարցման. «Վասն զի, այդ կարգի անձինք սերը կը թրթուեցընեն. արծաթեայ դգալով կաթսային տակը կը քերեն. մաքրելու յատուկ խողանակը ջրոյ մէջ կը թողուն. գեղեցիկ կոթով դանակները տաք ջրոյ մէջ կը ձգեն. աւելները չեն կախեր. սեղանի ըսպասները գետնի վերայ աստ անդ կը նետեն, որով մուկերը կը կըրծեն զայնս. տակառներն ու դոյլերն արևու մէջ կը թողուն, մինչեւ որ քայքայուին. լաթերը պարանին վրայ կը թողուն մինչև որ հովը տանի. ձմերային կարասիքներն արևուն վրայ կը թողուն, մինչև որ ուտիճք ապականեն. կանաչեղէններն ու միսերը սեղանատան մէջ կը ձգեն մինչև որ հոտին. միրգերն չինամելով կորդնոտեն. օշարակի սրուակաց բերանները չգոցելով՝ որդերուն տեղի կուտան. խահուէ, թէյ, պըղպեղ և այլն գոց ամանի մէջ չպահելով՝ անհամ ու անճաշակ կընեն։ Աղքատութիւնն ամօթ չէ, բայց նա՝ որ այս կերպով կաղքատանայ, պէտք չէ՞ որ ամաչէ»։

×× Լոնդոնէ գրեցին՝ երեք կարգի բաժնուած են։ Առաջին կարգի տիկնայք են ի ծննդենէ ազնուական տիկնայք. յոյժ հազուադէպ է որ մին ի սոցանէ անպատշաճ ընթացքի մէջ գտնուի. այդպիսի սխալման մը սովորական պատիժն է տարադրումն. այդպիսիք կա՛մ արտակարգ լինելով՝ ստորին դասու մէջ կը մնանեն, կամ օտար երկրի մէջ կը քաւեն իրենց յանցանքն։ Երկրորդ կարգի կը պատկանին խորհրդարանական, դիւանագիտական և պաշտօնական անձանց կանայք, որք առանց բացառութեան՝ առաքինութեան տիպար և օրինակ են. կասկածի մը ստուերովն անգամ նսեմացեալ չեն։ Երրորդ կարգի տիկնայց կը պատահի մարդ մայրաքաղաքին առաջին տանց մէջ. սոքա սեղանակից են նախարարաց, դիւանագիտաց և ցեղական իշխանաց. բայց իրենց դիրքն ապահով չէ։ Այս կարգի տիկնայք ամուսիններ ունին, որոց կրնան ապաւինիլ իրենց ծախուց համար, բայց նոքա անձնական գործոց պահանջմամբ բացակայ կը գտնուին իրենց տուներէն, զի երկաթուղւոյ պայմանագիր մ'ունին յԱրեւելս, հողեր ի Սիպերիա, արտեր յՍպանիա, թրամվէյ մը ի Դամասկոս։ Սակայն այդ առժամանակեայ այրիութիւնը տիկնայց վիճակը չփոխեր. իրենց տունն անվրդով է, թէև շատ այցելութիւններ կընեն, և շատ այցելուներ կընդունին։ Այս կարգի տիկնայք առաջին և երկրորդ կարգի կանանց պաշտպանութիւնը կը վայելեն, և եթէ չարախօս լեզուներ դրպարտեն զնոսա, հետաքրքրական մարտիրոսուհիներ կը լինին։ Չորրորդ կարգի տիկնայք են արհեստականք. ոմանք ի նոցանէ ծննդեամբ կամ աղգականութեամբ աղնուականութեան կը պատկանին, ոմանք ալ քաղաքական կամ պաշտօնական յարաբերութիւններ ունին, բայց չեն ուղեր իրենց շաւղէն շեղիլ։

×× Կնոջէ մը ոճիրը։ — Հռովմայ մէջ վերջերս նշանաւոր հրնութիւն մը գտնուած է։ Բօրդա Կալարիա նոր շէնքի մը համար հիմն փորուած ատեն, դործաւորք ստորերկրեայ շիրիմ մը դտած են, յորում կճեայ վեց սափորներ կային, և նոցա վրայի դրերէն յայտնուած է թէ շիրիմը Լիցինեան ընտանեաց էր. դործաւորք կամարին տակ երկու ոտք բարձրութեամբ արուրէ արձանիկ մ'ալ դտած են, և զայն վաճառելու համար՝ ծածկած են այդ դիւան, և յաջողած են 6000 ֆրանքի վաճառել Ռուսի մը, մինչ քառապատիկը կարժէր։ Բայց վերջապէս երբ շէնքին տէրն իմանալով՝ դիւտին տեղն հասած, և տեսնելով որ սափորները բացուած և մէջը գտնուած աճիւնները դուրս հանուած են, հարցուցած է թէ ո՛ւր փոխադրուած են աճիւններն, դործաւորին մէկը բարկանալով պատասխանած է թէ «Արդարեւ աճիւն եղած է այդ սափորաց մէջէն, բայց մաքէս անդամ՝ չանցաւ որ այդ աննման աճիւնը պիտանի կը լիներ. և ուրովհետեւ յոյժ ճերմակ ու մաքուր էին, զամբիւղիս մէջ ժողովելով, կնոջս ղրկեցի, որպէս զի ճերմակեղինաց լուացման դործածէ։» Այսպէս Լուցիոս Քալբերնիուս Կեսարի և Հռովմայեցի բազում մեծամեծաց աճիւնն, իրենց մահուանէ 18 դար վերջը լուացարար կնոջ մը աղտոտ լաթերու մաքրութեան դործածուած է։

×× Սերպիոյ թագաւորն սերպական հողէն՝ որ ի Պեսարապիա, Մօշքա Վալտպերկ անուն միլիոնատէր մը գնած լինելով, Ռուսաստանէն դաղթեալ աղքատ հրէից վարուցանին պիտի յատկանայ։

×× Օհիո (Միացեալ նահանգաց մին) դէջ ամուսնաթողութիւնն վերջին ժամանակներս սկսած է բազմանալ, և անկլօ-ամերիկեան ժողովրդեան մեծ մտահոգութիւն պատճառել։ Մինչդեռ 1865 ին 873 ամուսնաթողութիւն տեղի ունեցած էին յիշեալ նահանգին մէջ, 1883 ին բարձրացաւ մինչև 1865. 1870 էն հետէ ամուսնաթողութեանց թիւն հետզհետէ ստուարացած է։

×× Ժեղէր, ըստ նոր վիճակագրութեան, յիտալիա կը գտնուին 1558 հոգի. Գերմանիա՝ Աւստրիա՝ Պելճիա և Հոլանտա՝ 2165. Դաղղիա և գաղթականութեանց մէջ՝ 2798. Սպանիա և Մէքսիկա՝ 1933. Անդղիա և Միացեալ նահանգք՝ 1895։ Ընդ. ամենն՝ 10349։

×× Փորձով հաստատեալ է, թէ աւելի անձրև կուգայ լուսնի առաջին քառորդին ժամանակ, քան ի լրանալ լուսնի։

×× Արեգակնային դրութեան մէջ մինչև մօտ ժամանակներս 219 փոքրիկ մոլորակք հաշուեալ էին. արդ՝ ամերիկացի աստղագէտք ստուարացուցած են այս թիւն՝ 58 հատ ալ աւելցընելով։

×× Հետաքրքիր վիճակագիր մը կը հաստատէ, թէ 64 ժողովրդոց վրայ իշխող 2540 կայսերաց՝ թագաւորաց և իշխանաց 300 ը դահընկէց, 64 ն՝ հրաժարած, 24 ն՝ անձնասպան, 12 ը՝ խելակորոյս եղած, 100 ը՝ պատերազմի մէջ մեռած, 126 ը՝ թունաւորուած, 25 ը՝ զիրենք դերի վարող ազգաց խոշտանգմանէն մեռած, 151 ն՝ ըսպանուած և 108 ը՝ դլխատուած են։

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

կամ

Ռուսական Քրիստոնէական հաւատոյ

Ի պէտս ջափահաս աղակերտաց, ընծայացուաց եւ եկեղեցասիրաց

Երկասիրեաց

Տ. ԼՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՑ ՔԻԶԻՐԵԱՆ

ԿԻԻՐԻՆՑԻ

Սոյն գործը 400 ի մօտ երեսներէ կը բաղկանայ վայելուչ կազմով։ Առաջին մասին մէջ սահման հաւատոյ և Քրիստոսի եկեղեցին և անոր խորհուրդները, Բ. մասին մէջ Ս. Աւանդութիւն և արարողութիւն եկեղեցւոյ ամբողջ բացատրուած և Հին և Նոր Կտակարանի վկայութեամբ հաստատեալ է։ Կեդրոնատեղին է Մարգարեան դրատունը և կը գտնուի ամէն Հայ դրավաճառաց քով, ի դին կէս մէճիտ։

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

Գաղղիարէնէ 'ի Հայ բարգմանութեան

Ի պէտս ազգային վարժարանաց

Յօրինեաց Ռ. Յ. Պէրպէրեան

Սոյն դասագիրքը պատրաստուած է բոլորովին նոր և դիւրուսոյց դրութեամբ մի, որ կուդայ մեր ազգային վարժարանաց մէջ գաղղիարէն լեզուի ուսուցման եղանակն յեղափոխել, և մինչև հիմա դործածուած դասագրքերն և հին դրութիւնը վանել, որք փոխանակ աշակերտին դիւրութիւններ ընծայելու, փոխանակ օգնելու նորա առաջին քայլերուն լեզուին մէջ զոր ահա կըսկսի ուսնիլ իրեն համար բոլորովին օտար մի լեզու, ընդհակառակն կը դժուարացնեն զայն և առաջին վայրկենին աշակերտին առջև այնպիսի դժուարութիւններ կը հանեն, որք կը խրատուցանեն և կը յուսահատեցընեն իսկ զինքը։ Այս նոր դասագիրքը կուդայ մեր ազգային վարժարանաց մէջ մեծ պակաս մը լեցնելու, և այդ կարևոր լեզուի դիւրին կերպով ուսուցման հզօրապէս նպաստելու։

Արդէն Յօրինողին անունը բաւական դրական մ'է դործոյն կարևորութեան և օդտակարութեան։

Կը ծախսուի ամէն Հայ դրավաճառաց քով ի դին 4 դահեկան։ Կեդրոնատեղին է Արամեան տպարան, Յակոբեան խան։

ԱԲԲԱ ՔՕՆՍԹԱՆԹԻՆ

ՍԻՐԱՎԷՊ Լ. ՀԱԼԻՎԷԻ

Թարգմանեաց օրիորդ Ե. Օտեան։ Կը վաճառուի ամէն Հայ դրավաճառաց քով ի դին 10 ղրշ։ Կեդրոնատեղին է Արամեան տպարանը։

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ

ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ

Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան գրած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, եւ Աղթամարայ ու Սսոյ կաթուղիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան եւ պարտուց ու պաշտման վրայ, պատմութեամբք՝ արձանագրութեամբք եւ հին ու նոր վաւերական պաշտօնագրովք հաստատելով զամենայն։ Ընթերցողն լիուլի ծանօթութիւն կստանայ Հայաստանեայց Հայրապետութեան եւ Աղթամարայ ու Սսոյ անցեալ եւ ժամանակակից վիճակց վրայ։ Անշուշտ եմք, թէ մեծ կարեւորութիւն ու օգտակարութիւն ունի այս հրատարակութիւնը, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում ամենայն Հայոց Հայրապետութեան գերագոյն գահն թափուր կը գտնուի, Սսոյ կաթուղիկոսական խնդիրն կը յուզուի դեռ եւ Պալաժենիայի բարեփոխութեան վրայ կխօսուի։ Գեր. Իզմիրլեան քաջ հետազօտած ու իմաստասիրած է զայս ամենայն, եւ լուսաւոր ծանօթութիւններ կրնծայէ հետաքննին Հայոց։ Գրքին սկիզբը դրուած ցանկը աչքէ անցուցողն պիտի տեսնէ, թէ ո՛րչափ նշանաւոր անցքեր նշանակեալ են խնամով, եւ քանի՛ նուիրական ու մեծարելի է Հայկակ ան հարստութեանց միակ մնացորդն եղող Հայրապետութիւնն։ Կարժէ, որ ամեն Հայ ունենայ հատ մը։ Կարժէ որ ամեն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կգտնուի լրագրոյս Գրասենեակը, Պոլիս Պալըդ-բազար Նաֆիյէ-խան վերի յարկ թիւ 16. Պաղչէ-դարու Ջըրավաճառ Պօղոս աղայի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսներէ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի եւ աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, ամեն ջղային տկարութեան ուժաթափութեան եւ տխրութեան համար. կը ջնջէ եւ անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի եւ երիկամանց վրայ օդտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանդարեալ վիճակը կը կանոնաւորէ եւ դրդռելով կենսական դործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ որովայնի մէջ լցուած կաղար, դլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կչափաւորի, եւ մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց բուն կը դառնան, առողջ՝ ուժեղ եւ բնական դիրքը կդտնուի։

ONCUENT HOLLOWEY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն եւ վերք բուժելու մասին ունեցած պալամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չէրէբինէ), սրունից եւ ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին եւ կամ կլաւանան. օդտակար է նաեւ հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւան, լօգացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ եւ զօրաւոր ազդեցութեամբը խոյլ («ըրոճ») հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ ասոիճան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն դործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տիպի վրայ, որ կգտնուի ամեն դեղավաճառներու քով, եւ մասնաւորապէս Պաղչէ-դարու Թաշ-խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, Թիւ 7, կը ծախսուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ոսքթօր Հոլլօուէ Իլլինոյն Օքսֆօրտ փողոց Թիւ 533։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

Բիզա-փաշա խան Թիւ 3